տարաբաղդաբար այդ կորստաբեր չարիքները արմատախիլ անելու համար ոչ մի ազդու և կըտրուկ միջոցներ ձեռք առնուած չեն մինչև ցարդ։ Այն ինչ Ուտիացոց աշխարհի երգրագործ Հայ ժողովուրդը պինդ նստած ճնաց իւր հայկեան երկրի նահապետական օջաղում անյաջող և աննպաստ պայմաններուն մէջ, զօրաւոր և անյաղթելի խոչընդոտներուն ու արգելքներուն դէմ անզօր և անյայտ կռիւ մղելով... Ուտիացոց երկրի տակուն Հայ ժողովրդի չարքաշութեան մասին հազարից մի օրինակ առաջ եմ բերում, որպէսզի իմ ազնիւ ընթերցողս մի թեթև գաղափար կարողանայ կազմել նրա անչափ համբերատարութեան և դիմացկունութեան մասին։ Ամառուան կիզող արեւ տակ, երբ սաստիկ տօթից և հեղձուցիչ շոգից շունչ քաշելու հնար չէ լինում, հէնց այդ միջոցին ժրաջան Հայ դիւղացին իւր դաշտային աշխատութեան մէջն է։ Այդ երկրի դժբաղդ երկրագործը ոտքից մինչև կոկորդը թրջուած հոտած ու նեխած ջրի ու տղմի մէջ, բլնձի ճահճոտ մարգերում քափ ու քրտինք մտած՝ մեծ եռանդով քաղհան է անում, այսինքն՝ ձեռասակար և աւելորդ բոյսերն ու փուշերը արմատախիլ է անում, որպէսզի ընտիր և մաքուր բրինձ կարողանայ ստանալ իւր կանաչազարդ արտերից։ Մի խօսքով՝ Ուտիացոց երկիրը իւր պտղաբեր հողերով, իւր ծաղկազարդ տափաստաններովն ու գեղանկար հովիտներով, թաւուտ անտառներով, պարզ և վճիտ աղբիւրներով ու վտակներով, յորդահոս ու կատաղի գետերով կատարեալ մի